ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
24.01.2025թ. թիվ 3/11-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Փաստաբանության մասին» օրենքի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի **կանոնադրության** համաձայն՝ ***փաստաբանների պալատի խորհուրդը (այսուհետ, նաև՝ Խորհուրդ) փաստաբանների պալատի գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթի շրջանակներում ընդունված որոշումները վերանայող մարմին է:***

Փաստաբանների պալատի խորհուրդն ունի **տասներկու անդամ**՝ չհաշված խորհրդի նախագահը: Խորհրդի անդամները (բացառությամբ խորհրդի նախագահի) վարկանիշային կարգով ընտրվում են փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից չորս տարի պաշտոնավարման ժամկետով:

ՀՀ փաստաբանների պալատի **նախագահն** ի պաշտոնե Խորհրդի նախագահն է:

№	Վիճակագրական տվյալի չափանիշը	Վիճակագրական տվյալը
1	Խորհրդի ընթացիկ նիստերի քանակը	**20**
3	Խորհրդի բողոքարկման վարույթների քանակը	**16 (16 մերժում)**

ԽՈՐՀՐԴԻ ԸՆԹԱՑԻԿ ՆԻՍՏԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Խորհուրդը 2024թ. անցկացրել է ընդհանուր **20** ընթացիկ նիստ, որոնցից՝ **2**-ն առկա ձևաչափով, **18**-ը համակցված՝ առկա և հեռավար եղանակներով: Նիստերի արդյունքում կայացրել է **269** որոշում:*

№	Վիճակագրական տվյալի չափանիշը	Վիճակագրական տվյալը
1	փաստաբանական գործունեության արտոնագիր տալու հարց	16
2	փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցնելու հարց	83
3	փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը վերականգնելու հարց	58
4	փաստաբանական գործունեության արտոնագրի գործունեությունը դադարեցնելու հարց	12
5	այլ երկրի փաստաբանին մեկ տարի ժամկետով ՀՀ տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելու հավատարմագիր տրամադրելու հարց	19
6	անդամավճարի արտոնության հարց	11
7	անդամավճարի տարաժամկետ վճարման ժամանակացույց սահմանելու հարց	7
8	հաշվետվությունները հաստատելու հարց	9
9	փաստաբանի օգնականի արտոնագիր տրամադրելու հարց	19
10	փաստաբանի օգնականի արտոնագրի գործողության ժամկետը երկարաձգելու հարց	3
11	ՀՀ փաստաբանների պալատի անունից խոշոր գործարք կնքելու համաձայնություն (թույլտվություն) տալու հարց	2
12	Կարգեր հաստատելու և փոփոխություններ կատարելու հարցեր	6
13	Ծրագրեր հաստատելու հարցեր (բյուջե, հաստիքացուցակ)	3

14	դիմում և բողոք քննարկելու մասին հարցեր	10
15	Այլ	11